


ՏԱՃԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՑ ԿԵՂԵՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 34

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրո՛ւ
Գաւառաց համար տարեկան	40 ”
Արտասահմանի համար տարեկան	10 Գրան՛
Ձեռնէ կը ծախուի պրակը	40 փաւա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփքաւ, Հայոց եկեղեցի

در سماعتده بشکطاشده ارمی کلیسایسنده (داجار) غزته سی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
Զարմաքըրլար, Ցակորեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Դնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. ՐԱՂԵՆՆԻ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Ս. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէղիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբա Բնյ. Պալլազեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԵՐԱՆՈՒՊՈՒՄ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՐԱՆՈՒՊ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
լիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գալիկեան
ԱՅՆԻՍԿ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՍՆ ԳՐԱՆՆԱԿ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տոնէլեան
ԲԱՅԵՐԴ.—Մ. Սանտահան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԳԱՂԱՏԻ.—Տ. Յարութիւն Բնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍՍ.—Ք. Թիւրաքեան էֆ.
ԵՕՁԱՍ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՁԱՍ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՍ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՆ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սաւաթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՐԱՍԻՆԻՆ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆՁԻՍԹԱՆ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ա.
Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՒՄԻՒՄ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ՋՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդաշարեան
Շ. ԳՐԱՆՆԱԿ.—Տ. Նախան Բնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէնեան
ՊԱՆՏՐԱՍ.—ՊԱԼԷՍԻՍ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մալլաճեան
ՊԱՂԱՍ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպսկ. Կէօմբիւճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Քէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա.
Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՈՒՄ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըշ-
նիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թագմէնեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապալեան
ՍԵՐԱՍԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէփիլի Բնյ. Օտապալեան
ՍԵՂԱՆԻ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիմաքս Բնյ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօլ-
լէթեան
ՏԻՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բնյ. Բիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 34

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—«Տաճար»ի շուրջը, ԽՄԲ.—Գիտութիւն եւ հաւատք, (Թարգմ.) ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԵՍԵԱՆ.—Բաց նամակ առ Բրոֆ. Յակոբոս ձէճիգեան, ԳԷՈՐԳ ՍԷՅԷՐԵԱՆ.—**ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.** Օրթոտոքս եկեղեցին եւ Վատիկան.—Անգլիոյ կաթողիկոսը համաժողովը.—Տեսիլը (քերթուած) ՍՏ. Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ.—**ՕՏԱՐ ԷՋՆԵՐ,** Աւետարանական պատմութիւն.— Ապագայ քաղաքակրթութիւնը, ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ.—Աստուած եւ քննութիւնը, ՊՕՐՏԵՆ ԲԱՐՔԸՐ ՊԱՌԻՆ.—**ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ,** Շաբթուան լուրեր:

“ՏԱՋԱՐ”Ի ԺՈՒՐՋԸ

Յառաջիկայ 36րդ թուով «Տաճար» կը լրացնէ իր առաջին տարեշրջանը: Մէկ ֆանի քարտարներու առաս նուիրատուութեան շնորհիւ հիմնարկուած եւ մինչեւ 6րդ թիւը սպուած, «Տաճար» 7րդ թիւէն սկսեալ յանձնուելով այժմու խմբագիր-ճնօրէնին պատասխանատուութեան, այդ թիւէն աւելի կրցաւ կանոնաւորապէս հրատարակել միմիայն պատշաճութեան բաժանորդներու համակիր ընդունելութեան շնորհիւ: Այդ համակրութիւնն այնքան լաւ եղաւ եւ ընդհանուր, որ Խմբագիր-ճնօրէնը՝ վեց թիւ միայն կիսամետալի ձեւով հրատարակելէ ետք, համարձակութիւն ունեցաւ տարւոյն կեսին շաբաթաթերթի վերածել «Տաճար»ը, առաւել եւս զոհացում տալու համար ժողովրդային պէտքին:

Իրաւ է որ ցուցուած համակրութեան համապատասխան վիճակի մէջ չի գտնուիր Խմբագիր-ճնօրէնն իր հրատարակած թերթը, որուն մէջ կը տեսնէ շատ կարեւոր պակասներ, ինչպէս Ս. Գրոց մեկնաբանական մաս մը, նաեւ Հայ Ս. Եկեղեցւոյ եւ իր երանաշնորհ Հայրերու պատմութեան եւ վարդապետութեան վրայ ժողովրդային գրուածներ որ խիստ ցանցաւ երեւցան: Այդ եւ մամուլական թերթներ, զորս փորձա-

նութիւնը ցուցուց մեզի—եւ որոնք ունեցան իրենց շահ համոզիչ շարժանքները—, յառաջիկայ տարեշրջանին սկիզբէն իսկ շեցնելու համար, այժմէն վարչական կարգադրութիւններ կ'ըլլան եւ բանակցութիւններ կը կատարուին եկեղեցական եւ աշխարհական հեղինակաւոր գրողներու հետ, ապահովելու համար անոնց տեսական եւ կանոնաւոր աշխատակցութիւնը: Եւ ուրախ ենք յայտարարելու որ շահ փաշտելական խոստումներ կ'ըցած ենք ստանալ ամէնէն աւելի սիրուած դէմքերէ, եւ կը յուսանք թէ յառաջիկայ շաբթու պիտի կրնանք ծանուցանել կանոնաւոր աշխատակցութիւն խոստացողներու անունները՝ իրենց ստանձնած ճիւղերովը հանդերձ:

Բայց որպէսզի ծրագրուած բարեփոխումներն եւ տեսական աշխատակցութիւններն ապահովել եւ իրագործել կարելի ըլլայ, անհրաժեշտ պէտք կայ նիւթական գոհողութիւններու: «Տաճար» կ'ըցաւ անխափան հրատարակուիլ, յոյս իր սովորական հասոյթներովը, այն է մի միայն բաժնեգիրներովը, եւ պարբերական թերթերու տեսականութեան մասին տարածուած կասկածը բացարձակապէս անհիմն պէտք է նկատուի այլեւս կրօնաբերքիս նկատմամբ: Եւ, աւելի'ն ըսելու համար, եթէ յոյս բաժնեգիրներու հաշիւէն եղած պահանջները, ՀԱՐԻԻՐ ՈՍԿԻԻ ՄՕՏ, անվճար մնացած չըլլային ցարդ, այժմէն պիտի կրնայինք իրագործել թերթին սովորական տասնեւիցե էջերուն վրայ 4 կամ 8 էջի յաւելում մը, առանց բաժնեգրի ու եւ փոփոխութեան:

Ամէն անոնց որ կը փափաքին, ուրեմն, «Տաճար»ը աւելի եւս պայծառ եւ բարգաւաճ տեսնել, հրաւեր կ'ուղղենք բոլորուն յայտ գերազանցօրէն օգտակար գործին շուրջը, դնելու համար զայն իրապէս ժողովրդեան հոգեկան եւ բարոյական պէտքերը գոհացնելու վիճակի մը մէջ:

Մասնաւորապէս կը հրաւիրենք վերջացող տարիէն սակաւին պարտք ունեցող Պատ. բաժանորդներն ու գործակալները, փութալ անյապաղ կարգադրելու իրենց հաշիւները, ի վիճակի դնելու համար թերթիս տնօրէնութիւնը՝ նոր տարեշրջանի առաջին թիւէն սկսեալ «Տաճար»ն ընկելու առաւել հրապուրիչ, աւելի' ճիշտ, աւելի' նպատակաշարժար:

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔ

Բ.

Այդ ամբողջ խորհուրդի, գաղափարի, արուեստական գեղեցկութեան, զգացումի աշխարհը (Հոմերոս) գաղանիք մը պիտի մնայ իրենց համար: Նոյնը կը պատահի նաեւ փորձառական բնախօսութեան, երբ

իւր յատուկ զննութիւններուն միայն կարեւորութիւն կ'ընծայէ: Ամէն անոնք որ սրտովին այս հարցերով կը զբաղին, գիտեն թէ բնախօսութեան որ կ'ուսումնասիրէ մարդը, և հոգեբանութեան մէջ որ կ'ուսումնասիրէ ներքին երեւոյթները, մէջ անդունդ մը կայ, ուրկէ ոչ ոք կ'ըցած է անցնիլ:

Ընդունինք որ գիտութիւնը կարող ըլլայ հաստատելու իր հիմք՝ իմացականութիւնը, ամէն կերպով քննած ու ստուգած ըլլայ զայն, գիտնայ իմացականութեան ունեցած յարստերութիւնները ուղեղին գործողութիւններուն հետ, վերջապէս տիեզերքի մէջ հասկցուած ու տեսնուած բոլոր բաները ծանօթ ըլլան իրեն։ Բայց այս կերպով ամբողջ մարդն ու մարդկութիւնը հասկցած պիտի ըլլայ։ Ոչ։ Բարոյական գիտակցութեան ընդարձակ գետինը փակ պիտի ըլլայ իր առջեւ։ Ոչ ոք կրնայ գիտակցութեան կամ խղճի հետ առնչութիւն ունեցող իրողութիւնները գիտականօրէն հաստատել։

Ինչ պիտի ըլլայ այս ամէնուն եղրակացութիւնը։ Ինձ այնպէս կը թուի թէ ամէն ոք իրաւունք ունի սա եզրակացութեան գալու։ Գիտութիւնը ունի իր կալուածը։ Այդ կալուածը մասնակի կերպով զննուած է։ Գիտութեան մը համաքարտէսութիւնը՝ զոր ոչ մէկ կողիացած իմացականութիւն չի կրնար հասկնալ ինքնին, ոչ այլ ինչ է եթէ ոչ գիտական աշխարհի յաղթանակներուն սկիզբը։ Բայց այդ աշխարհը մէկ մասն է այն աշխարհին, որուն կրնայ խելամուտ ըլլալ մարդ։ Հնորիւ իր մէջ ունեցած կարողութիւններուն։ Բաղդատութեամբ մը աւելի պարզենք մեր գաղափարը։

Մարդ նւթական աշխարհն ըմբռնելու համար չարք մը զգայարանքներ ունի, որոցմէ իւրաքանչիւրը ունի իր պաշտօնը։ Աչքը կը տեսնէ լոյսը, ականջը կը լսէ ձայնը։ Այս զգայարանքներուն պաշտօնները այնքան սյաղագն են որ մին անդգայ կը մնայ ու է երեւոյթի առջեւ, իսկ միւսը ոչ։ Նմանապէս աշխարհը ըմբռնելու համար մարդ տարբեր միջոցներ ունի, որոնք զիրար կը լրացնեն բայց չեն կրնար զիրար փոխանակել, որովհետեւ իւրաքանչիւրն իր կալուածը ունի։ Խիղճը (Conscience) զգայարան մ'է, որ բոլորովին անծանօթ է Բանին (raison), ինչպէս այդ վերջինը երեւոյթ մ'է, զոր կարելի չէ ըմբռնել մեքենական միջոցներով։ Գիտութիւնը ստուգութեան միակ աղբիւր նկատել՝ մարդը իր միւս բոլոր ծանօթացման միջոցնե-

րէն հրաժարեցնելու համար խորհուրդ տալ կը նշանակէ, ինչ որ չափազանց վնասակար է։

Պէտք է խորշիլ շարունակ այլամերժ ձգտումներէ, որովհետեւ որքան ալ օրինական ըլլան անոնք, երբ իրենց բնական ազդեցութեան վերածուին, զեղծումով կը ջնջեն ինքզինքնին։ Այս մասին իբրեւ օրինակ կրնանք մէջ բերել ճգնաւորական կեանքը։ Գիտական ծանօթոյքը փոխանակել այն ամէն ակերտն հետ, ուրկէ մարդկութիւնը ստուգութիւններ կը հանէ, նորատեսակ ճգնաւորութիւն մը հաստատել կը նշանակէ։ Այս նորահաստատ դրութեան հետեւանքն է այս օրուն զարգացած դասակարգին մէջ տեսնուած սկեպտականութիւնը, կորովի և ապրելու եռանդին չգոյութիւնը և կեանքի ներդաշնակութեան ամբողջական խանգարումը։ Այդ սկեպտիկներուն հոգին իր բնական անունդէն զըրկուած, իր սաստիկ պապակին մէջ զովացուցիչ գեղեր կը փնտռէ և թոյներու կը հանդիպի։ Նոյն վիճակը ունի նաև ռամիկ ամբոխը, որ շարունակ խաբկանքի ենթակայ է։

Մենք չպիտի ուզէինք այս ծայրայեղ հետեւանքները թուել, եթէ երբէք այժմու մարդկութեան մէջ չհանդիպէինք այն բազմաթիւ անհատներուն, որոնք միայն բանականութեամբ կամ գիտութեամբ ապրելու ակտէն վարակուած են։ Այդ վարակման պատճառն այն է որ առանց բացառութեան ամէն ինչ կ'ուզուի գիտական վերլուծման ենթարկել։ Սիրաւ իր զգացումի անհուն հարստութիւնով, խիղճը իր արգարադատութեամբ, վերջապէս ամբողջ կեանքը իրական աշխարհէն վտարուած են կարծես։ Աշխարհ մեծ ու դատարկ չըլանակ մըն է, որ սոսկում կ'ազդէ...։ Այս ըմբռնումին բնական հետեւանքն է այն երկարատե ու սոսկալի վիշտը, որ վերի վայր կը չըջէ ամբողջ մարդկութիւնը։ Բոլոր թարչամած տերեւներուն, բոլոր կորսուած յոյսերուն, բոլոր սէրերուն և պատրանքներուն վրայ կը ծփայ մեծ տխրութիւնը չհաւատալու...։

Ուրեմն այս ամէնէն կը հետեւցուի թէ գիտութիւնը չի բաւեր: Մարդ իր գիտցածով միայն չ'ապրիր և չի կրնար ալ ապրիլ: Մարդը իմացականութենէ աւելի տարբեր բան մըն է, և իր գոյութիւնը տեւականացնելու համար գիտութենէ աւելի տարբեր բան մը պէտք է իրեն: Այս հաստատութիւնը (affirmation) կարծուածէն շատ աւելի հեռուն կը տանի զմեզ: Արդարեւ ոմանք զիտել կուտան թէ աւելի լաւ է գիտութեան ընդարձակ գետին մը տալէ վերջ, այդ գետինն քով անկիւն մ'ալ պահել այն կարգ մը բաներուն համար, որոնք թէեւ գոյ են, բայց անկարելի է գիտական փորձերով ապացուցիլ: Մեր ըմբռնումը տարբեր է սակայն. մենք կը հաստատենք թէ գիտութեան հետ զուգընթաց և անոր հետ միեւնոյն իրաւունքները վայելող ուրիշ միջոցներ կան մարդուն մէջ, իրականութիւնը ըմբռնելու և անոր հասնելու համար: Այս մասին բարոյական կեանքէն օրինակներ մէջ բերենք: Բարին, չարը, կարեկցութիւնը, անձնութիւնը, սէրը, ի՞նչ են այս ամէնը: Գիտական տեսակէտով ոչինչ: Բայց ինչո՞ւ համար գիտութեան անձանօթ մնացած այդ ոչնչութիւնները, տեսականօրէն չընդունող բազմաթիւ գիտուններ՝ ինքնաբերաբար այդ ոչինչ նկատուած յատկութիւններով կ'ապրին, իբր թէ իրականութիւններ ըլլային անոնք. արդեօք իրենց այդ կերպ շարժելուն պատճառը տահաւական ունակութիւն մ'է: Արդեօք ընկերային և ընտանեկան հիմքերը չխախտելու համար խոհեմութիւն մ'է իրենց ըրածը...

Ահա ուրիշ օրինակ մ'ալ, որ առնուած է ոչ թէ անհատական այլ ընկերային կեանքէն: Գիտական տեսակէտով ամէնէն աւելի անհեթեթ բանը՝ տկարներուն, հաշմանդամներուն և բոլոր տանջուածներուն հանդէպ մեր ցոյց տուած խնամքն է: Հին ատեն այսպիսիները իրենց ծնած օրն իսկ կը մահացուէին անդթօրէն: Գիտական տեսակէտով այդ հին ու վայրագ սովորութեան համաձայն պէտք է վարուիլ այդ բազդէ զրկուածներուն հետ: Կեանքի պայքարին մէջ զօրաւոր ու կաշմբուռն մարդոցն է իրաւունքն ու տեղը, անոնցն է իշխանու-

թիւնն ու վայելքը: Հեռի՛, մէկ կո՛ղմ տրկարներն ու բնութենէն ապտակուածները: Ասիկա տրամաբանական է: Ամբողջ բնական գիտութիւնը դէպ ի այդ տրամաբանութեան կը տանի զմեզ: Այսպէս կ'ընեն բոյսերն ու կենդանիները...

Եւ քանի որ ասիկա տրամաբանական է, ուրեմն մենք ինչո՞ւ անոնց չենք նմանիր... որովհետեւ այդ կերպ շարժիլ, պարզապէս յիմարութիւն է: Այո՛, խոտովանինք թէ մեր մէջ հաւաքաբանութեան և գիտութեան ներկայացուցած բնական գիտութեան տարբեր ստուգութիւններ կան: Մեր մէջ կայ ձայն մը որ մեղի կ'աղղարարէ թէ պէտք է օգնութեան հասնիլ տկարին ու դժբաղդին, թէ բոլոր տրկարները, բազդէն զրկուածները մարմնական միեւնոյն կազմութիւնը ունին, ինչպէս մենք. հետեւաբար մենք ենք որ կը տանջուինք այդ վիրաւորուած անդամներուն մէջ. և ասոր համար է որ այդ դժբաղդներուն հանդէպ եղած ու է զրկանք ու ճիւղերուն ոճիրը պէտք է նկատենք:

Ի՞նչ է պատրաստութիւնը: Գիտութեան համար գոյութիւն չունի ան, որովհետեւ անկարելի է գիտականօրէն վերլուծել: Եթէ այդ պարտականութիւնը մինչև անձնապահութեան տանի զմարդ, ահա այն ատեն կը սկսի գիտունին մտախռովութիւնը: Թուարանական տեսակէտով մարտիրոսը հաւասարակշռութիւնը կորսնցնող էակ մըն է, խենթ, յիմար, լուսնոտ մըն է, բայց այս պարագային գիտութեան համար մարտիրոսացողներն ի՞նչ պիտի անուանենք: Գիտութիւնն ալ ունի իր մարտիրոսները, հետեւաբար անոնք ալ լուսնոտներ, յիմարներ, ինքնահաւասարակշռութիւնը կորսնցնող էակներ են: Մենք կրնանք տակաւին այս թուումն մասանցն ընել, և գիտութեան ու անոր մատուցած մեծ ծառայութիւններն ընդունել յետոյ, այն հաստատ համոզումին դալ թէ աշխարհը յառաջ վարող ոյժերը մեծ մասամբ իր կառուածէն դուրս կը գտնուին:

Գիտութեան ներքին փորձառութեան

ինչպէս նաև գիտակցութեան աշխարհին մէջ իւրաքանչիւր իրողութիւն հետեւութեան մը կը տանի զմեզ, և իւրաքանչիւր մանրամասնութիւն ամբողջութեան ծանօթ իրերը դէպ ի անծանօթները կը մղեն զմեզ: Որքան իրականութեան հասկիւնք, այնքան անծանօթ մնացած իրականութիւնները խոյս պիտի տան մենէ, բնական օրէնքի մը համաձայն: Գիտութեան թելադրութիւններն են մեծութեան անսամանութիւնը և փոքր անհունութիւնը, որոնք իրեն համար այնքան ստոյգ են որքան անհպելի: Աստղաբաշխը կ'ըմբռնէ տարածութեան անհունութիւն մը, որուն քով ծանօթ աշխարհի միջոցները բոլոր մարմիններով, կեանքներով և պարունակած հրաշալիքներով միասին գերօ կ'արժեն: Մանրագէտը կ'ըմբռնէ վտր անհունութիւն մը, որուն քով մեր քննած առարկաներէն ամէնէն աւելի նուրբը տիեզերքի մը համեմատութիւնը ունի տակաւին: Միեւնոյնն է նաև մարդուն հաստատած բոլոր իրերուն համար: Ամէն ինչ կ'ըսէ իրեն, աւելի հեռուն, աւելի վեր:

Մարդը իր բարոյական գիտակցութեան մէջ Գեղեցկութեան, Սիրոյ և Արդարութեան աշխարհի մը հազիւ ուրուագծուած նախագիծերուն կը հանդիպի և կը հետեւի անոնց սրտով, ինչպէս աչքը բնազդօրէն կը հետեւի իր առջեւ երկարած գծին: Եւ այսպէս իր գիտական հետաքրքրութիւններուն խորը, տարածութեան անհունութեան յայտնութիւնը գտնելէ վերջ, իր բարոյական գիտակցութեան խորն ալ կը գտնէ ուրիշ, այսինքն գեղեցկութեան, արդարութեան, ճշմարտութեան, սիրոյ և կեանքի անհունութեան յայտնութիւն մը:

(Թարգմ. Գրող.է)

ՍՈՒՐԷՆ ՎԱՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Սկիզբ.

ՏԵՍԵԼԸ

Տեսիլներու զաւառները հեռակայ,
Վերանալու աշխարհէ,
Թախծոտ հոգիս բուռն տենչով կը ցանկայ,
Վերանալու աշխարհէ:

Տեսիլներու աշխարհին մէջ սխալի,
Անհունը ես կ'ողջունեմ:
Անյուսութեան մէջը յանկա՛րծ կը ցրուի,
Անհունը ես կ'ողջունեմ:

*

*

Մոխրակոյտին նոր-Անիի,
Վրջայ բազմած կը տեսնէի,
Աղջնակ մը վիշտով մ'անվերջ,
Սուգուած մեղմեխ կսկիծի մէջ:

Աւերակի այդ այցելուն,
Կը պարապէր դէմքով Թախծուն,
Հոն ածիւններ յար պեղելով,
Մանրիկ մանրիկ մատուրներով:

Միշտ կը պեղէր ու կը պեղէր:
Արցունքներով յորդ իր բիրբեր
Ծով մը դարձած ծածանները,
Ինչե՛ր, ինչե՛ր ան կը փնտռէր:

Հարսգատն իր, խաղակիցն իր,
Որուն հետ միշտ կ'ուսանէր ժիր.
Հիմակ, աւա՛ղ, կոպիտ ծեռներ,
Իր աղբարիկն էին զեններ:

Իջած հրեշտակ մը հրաշեայ,
Թաշկինակով մը մետաքսեայ,
Սրբեց անոր արտօսքի շիթ,
— «Եղբայրդ, ըսաւ գեղաժպիտ,

«Հո՛ն երկինքն է, ուր մեզի հետ
«Կ'ըմբռնէ կեանք մ'երանաւէտ.
«Դուն ինչո՞ւ լսս, մանկի՛կ սիրուն,
«Հո՞ծ մորմորի մէջ Թախալուն:»

Այսպէս ըսաւ, ու սրլացաւ,
Խինդի փոխով աղջնակին ցաւ:
Այս էր տրուած Դատալըճիւ,
Սըլացողէն կապոյտն անձիր:

*

*

Տեսիլներու երկինքին մէջ գեղեցիկ,
Մշտնջենի՛ն համարեմ.
Խունկի, բոյրի բընավայրին մէջ միտօր,
Մշտնջենի՛ն համարեմ:

Մարաշ

ՍՏԵՓԱՆ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

«ԱՐԱՐԻՉԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ»

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ԲՐՈՑ. ՅԱՎՈՐՈՍ ԷՖ. ՃԷՃԻՋԵԱՆԻՆ

Յարգելի Բրոքէսէօր

Ասկէ տարիներ առաջ՝ շաբաթաթերթ Բիւրակնի մէջ — զոր դուք կը խմբագրէիք այն ատեն — կարդացած եմ մերթ ընդ մերթ ձեր իմաստասիրական հիանալի յօդուածները, որ համակ աստուածապաշտութիւն կը բուրդէին: Դո՛ւք արեւի շողին, ծաղկի փթթումին, քարին ու փայտին, և վերջապէս Բնութեան ամբողջ հրաշալիքներուն և ներդաշնակ կազմաւորութեանը մէջ ստեղծող էակի մը պատկերը կ'ընդնշմարէիք, և կը ջանայիք գիտութիւնն ու կրօնը հաշտեցնել իրարու հետ: Կը ցաւիմ որ այժմ ձեր այդ հմտալից ու շինիչ գրուածներուն տեղ՝ հակակրօն և աստուածամոլութիւններ կը վխտան հրապարակին վրայ, ու կը թունաւորեն մեր թիւրու երիտասարդութեան և միամիտ պատանիներու մտքերը: Այդ կարգի հրատարակութիւններէն մին կարդացի վերջերս շաբաթաթերթ Ազասաւարտի 13րդ թիւին մէջ՝ «Արարիչը գիտութեան առջև» խորագրին ներքեւ՝ ԲԺ. Մ. Մալաքեան ստորագրութեամբ: Յարգելի բժիշկը իր յօդուածին մէջ հեզնելով Աստուածաշունչ Ս. Դրբի ստեղծագործութեան, նախաձնողներու, ջրհեղեղի ևն. պատմութիւնները, կ'ըսէ. «Անշուշտ բոլոր այս առասպելները օղիթինալ են. բայց տղայական, անընդունելի, և հրաշքի բարեկամները ցաւելու են որ այս ցնորքները ճշմարտութենէ շատ ու շատ հեռու են»: Յետոյ կ'աւելցնէ. «Այսօր ոչ ոք անգիտանալու է թէ Աստուած մը չէ որ ստեղծեց այս ալլազան բայց սերտ կերպով կապուած կենդանիները և բոյսերը...»: Գիտնականի հովեր առնող յիշեալ բժիշկը՝ իր տեսութեանց իր փաստ կը ներկայացնէ կենդանիներու բրածոները, որոնք միլիոնաւոր տարիներ առաջ ապրող մեր նախահայրերն են եղեր: Այս առթիւ՝ վստահ

ձեր ձեռնհասութեան՝ կուգամ մի քանի հարցումներ ուղղել ձեզ, Տաճարի միջոցաւ, խնդրելով որ հոն պարզել հաճիք այդ մասին ձեր տեսութիւնները:

1. Խնշով ապացուցուած է որ հողի ընդերքներէն դուրս բերուած կենդանակերպ քարերը՝ կենդանիներու մնացորդներ են, և եթէ ճիշտ է այս, խնշով կը ստուգուի որ անոնք միլիոնաւոր տարիներ առաջ ապրած են այս երկրի վրայ, և ոչ թէ 5-6 հազար տարի առաջ:

2. Այդ բրածոները ո՞ր տեղերէ հանուած են գլխաւորաբար. երկրիս բոլոր մասերուն մէջ հաւասարապէս կը գտնուին առանցմէ:

3. Ատոնց գոյութենէն կարե՞լի է հետեւցնել թէ Աստուածաշունչ մատենան առասպել մըն է, և այս աշխարհը ստեղծող Աստուած մը չկայ:

Յուսալով որ չէք մերժեր գահացում տալ միամիտ գաւառացիի մը սոյն համեստ հարցասիրութեան.

Սիլվան
23 հոկտ. 1940

Մնամ յարգանքներով
ԳԷՈՐԳ ՍԷՖԷՐԵԱՆ

Ծ. ԽՄԲ. — Ուրախալի երեւոյթ մըն է գաւառի հեռաւոր անկիւնէ մը ցուցուած այս հետաքրքրութիւնը՝ աշխարհի ստեղծագործութեան Աստուածաշնչական պատմութեան եւ գիտական տեղեկութեանց միջեւ գտնուած կարծեցեալ տարբերութեան վրայ: Ատիկա կը նշանակէ թէ գաւառացին ենթադրուածին չափ միամիտ չէ, կլիելու համար ամէնէն անմարսելի դեղահատները գիտական այս կամ այն վարկածին, զոր շատեր չեն խցահարիր իբրեւ հաստատուած ճշմարտութիւն հրամեցնելու ժողովուրդին: Քաղաքակիրթ երկիրներու մէջ ամբողջ զրականութիւն մը կայ, հերքելու համար այդ կարգի յանդուգն տեսութիւնները, եւ «Տաճար»ի ծրագրին մէջ է ամէն առիթէ օգուտ քաղել՝ հետզհետէ ծանօթացնելու համար խախտ հանգամանքը գիտական այդ կարգի տեսութեանց: Բայց ատոր օեւնարկելէ առաջ, մենք վստահ ենք թէ յարգելի Բրոք Ճէճիճեան պիտի փութայ իր հեղինակաւոր գրչով պատասխանել ուղղուած հրապարակային հարցումին, փարստելու համար ճշմարտախնդիր միտքերու մէջ ծգուած տարակոյսը:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՅՈՅՆ ՕՐԹՕՏՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Այն իրողութիւնը թէ Մակեդոնիոյ և Թրակիոյ յոյն Օրթոտոքս Եկեղեցիները՝ Օսմ. կառավարութեան նոր հաստատած օրէնքին համաձայն՝ մեծ մասամբ բնակչութեան թուական ռուսիկութիւն կազմող Պուլկարներուն պիտի անցնին, որով յոյն Տիեզերական Պատրիարքին իրաւասութեանէն ելնելով պիտի ենթարկուին Պուլկարաց Եկեղեցիին, յայտնի է թէ մի՞նչ տագնապի մատնեց յոյն Պատրիարքարանը։ Ասկէ օգուտ քաղելով Լատին Եկեղեցիին, միութեան խնդիր յարուցած է։ Ասոր համար մեծ պահանջուած չին ընելը, այլ միայն սա կէտը որ Յոյն Եկեղեցիին ընդունի Պապին գերիշխանութիւնը, և Վատիկանի կաշխատի խնդրոյն ցանկալի ելք տալ։ Ասիկա կը նշանակէ որ եթէ Հռոմ յաջողի իր դիտումին մէջ, և կորինայ միութիւն հաստատել Յոյն Եկեղեցիին հետ, այդ պարագային այս վերջինը պիտի կորսնցնէ իր անկախութիւնը, ճամբայ բանալով որ իրմէ ուժացած Եկեղեցիներն ու Հռոմի հպատակը դառնան։ Ռուսական թերթ մը այս լուրը տալով, հեղինարար կ'ըսէ որ Յոյները կատարեալ կորուստի սպառնալիքի տակ են, եթէ չհետեւին տրուած խմատուն խորհուրդին, հրատարակելով միութիւն Պապի հետ, հզօր պաշտպանի մը՝ Հռոմի Պապին հովանաւորութեան տակ դառնուելու համար։ Միութեան հրաւիրողները գործը դիւրացնելու համար կ'ըսեն թէ՝ 1. Յոյն և Հռոմէական Եկեղեցիներու մէջ դաւանական տարբերութիւն չկայ գրեթէ։ 2. Պապական վարչութիւնը կարծուածին պէս բռնակալ չէ։ 3. Օսմ. կառավարութիւնը հետեւելով «Թուրքիան Թուրքիացիներուն» սկզբունքին, պիտի աշխատի վերցնել իր հպատակներուն մէջէն բոլոր ազգայնական և կրօնական խտրութիւնները, դանոնք ի մի ձուլելով, և այսպիսի պարագայի մէջ միայն Հռոմ կարող է հը-

պատակ ազգերը փրկել՝ իրեն միացնելով և հպատակեցնելով։ Բայց վերոյիշեալ ռուս թերթը կը պատասխանէ թէ՝ 1. Յոյն և Լատին դաւանութիւններու մէջ ահագին տարբերութիւն կայ, որու պատճառով ամբողջ գրականութիւն մը կազմուած է դարերու ընթացքին։ 2. Հռոմի բռնակալութիւնը աներեւ է Պաղեստինի և բոլոր այն երկիրներու մէջ ուր անիկա կ'ընթէ հոգիներու վրայ, միացնելով ամէն ազգայնական զգացում։ 3. Եթէ Թուրքերն ուղեն իրենց հպատակներն ի մի ձուլել, Հռոմ չի կրնար այդ բանին առաջքն առնել։ Այս իրողութիւններն յառաջ բերելէ ետքը, ռուս թերթը կ'ենկրակացնէ. «Ո՛չ, Լատիններու մեքենայութիւններն անօգուտ են, և անոնց խորամանկ դիտաւորութիւնն այս անգամ չի կատարուիր։ Յոյները, Օրթոտոքս Եկեղեցիներու թշնամիներու հետամտութեանց արհամարհոտ լուրթեամբ միայն կը պատասխանեն»։

*
* *

ԱՆԳԼԻՈՅ ԿԱթՈՒԼԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Անցեալ օգոստոսին գումարուեցաւ Անգլիոյ կաթոլիկներու ազգային համաժողովը, նոխաձեռնութեամբ Ուեստմինստըրի արքեպիսկոպոս Տ. Պունի։ Համաժողովը կազմուած էր գլխաւորապէս Անգլիոյ կաթոլիկ հաստատութեանց ներկայացուցիչներէն։ Կը մասնակցէին 27 միութիւններ։ Երեք ընդհանուր ժողովրդական նիստեր տեղի ունեցան, որոնցմէ մէկը՝ յատկապէս կանանց համար։ Նախագահ արքեպիսկոպոսը ժողովի բացման ճառին մէջ յայտնեց թէ 50 տարուան մէջ կաթոլիկութիւնն զգալի յառաջդիմութիւն բրած է Անգլիոյ մէջ, ուր 1850ին կային 587 կաթոլիկ եկեղեցի, 99 կաթոլիկ դպրոց՝ 11000 աշակերտներով, և 788 կաթոլիկ քահանայ։ Իսկ այժմ կան 1760 եկեղեցի, 3687 քահանայ, և 1064 դպրոց՝ 339,000 աշակերտներով։ Արքեպիսկոպոսն յայտարարեց նաև որ ոչ մէկ երկրի մէջ ոչ մէկ կրօն. հաստատութիւն այնքան մօտիկ չէ գտուած աղքատ և կարօտ դասակարգին, որքան կաթոլիկ Եկեղեցին։ Արքեպիսկոպոսը կոչում ըրաւ Անգլիոյ կաթոլիկներուն, որ աւելի եռանդով

փարին քարողական գործին, մանաւանդ
Հնդկաստանի մէջ: Համաժողովն երկու ու-
րոշում քուէարկեց: առաջինով անկեղծ
անձնութիւններն կը յայտնէ Հռոմի արժո-
ւին, և պատրաստականութիւն՝ անոր բոլոր
փափաքները կատարելու: Իսկ երկրորդով
կը բողոքէ կաթոլիկներու իրաւունքներուն
սահմանափակման դէմ: Համակրութեամբ
ընդունուեցաւ կաթոլիկ եկեղեցին թշնա-
միւններէն պաշտպանելու համար Միջազգային
կաթոլիկ Միութիւն մը հաստատելու առա-
ջարկութիւնը: Այս համաժողովին առթիւ
Լիտսի մէջ կազմուած էր հնախօսական և
գեղարուեստական ցուցահանդէս: Կաթո-
լիկ շրջանակներու մէջ ընդհանրապէս յա-
ջող կը նկատուի համակաթոլիկ ժողովի այս
առաջին փորձը:

ՕՏԱՐ ԷԶԵՐ

Թուս թիւգերահույակ գրողին եւ դարուս մեծա-
գոյն խորհողներէն մեկուն՝ Լեոն Թոլստոյի
գործերէն երկու հոյակապ էջեր, ըստ մեր
խոսման, ընտանօք կը ներկայացնենք ըն-
թերցողներուն, հեղինակի մը ծանօթացման
շաւագոյն միջոցը նկատելով նոյն հեղինակին
ոգին ցոյացնող հասունածի մը հրատարա-
կումը: Առաջինով, աւետարանաշունչ գեղե-
ցիկ պատմութիւն մը, կը ցոյանայ թուս մեծ
խորհողին նշմարէ հաւատքը՝ սիրոյ կրօնին
վսեմութեանը վրայ, իսկ երկրորդին մէջ կը
պարզուի հոգիի հազուագիւտ քաւարութիւն
մը, եւ կը խօսանայ իր վարդապետութիւնը,
ուր անհրաւրեւածին, գրկուածին դասը կը
պաշտպանէ ընչեղին, բռնակալին դիմ՝ հօտ
տրամադրանքներ մը:—

ԴԱՐՁԻ ԵԿՈՂ ՄԵՂԱԻՈՐԸ

(Աւետարանական պատմութիւն)

Եթեմանասուն ասորեկանին հասած
մարդ մը, որ ամբողջ կեանքը մեղքի
մէջ անցուցած էր, հիւանդ ինկաւ,
բայց չզղջաց: Վերջապէս մահը վրայ
հասաւ: Մարդը տեսաւ որ իր վեր-
ջին ժամը եկած է: Լալով ըսաւ.

—Տէ՛ր, ներէ՛ ինծի, ինչպէս նե-
րեցիր խաչին վրայի աւազակին:

Այս բառերն հաղիւ թէ արտա-
սանած, աւանդեց իր վերջին շունչը:
Բայց մեղաւորին հոգին սիրեց զԱստ-
ուած, հաւատաց թէ պիտի կրնայ
շնորհքի արժանանալ, և թուա գնաց
դէպի արքայութեան դուռը: Մեղա-
ւորը երկար ատեն բաղխեց, և պա-
ղատեցաւ որ զինքն ընդունին երկնքի
թագաւորութեան մէջ:

—Ո՛վ է ան որ Արքայութեան
դուռը կը զարնէ, ըսաւ ներսէն ձայն
մը. ի՞նչ գործեր կատարած է աշ-
խարհի վրայ:

Եւ ամբաստանողին ձայնը թուեց
այդ մարդուն բոլոր չար գործերը,
աւանց յիշելու միակ բարի գործ մը:

—Ո՛չ, աւելցուց, մեղաւորները
չեն մտներ Աստուծոյ Արքայութեան
մէջ. գնա՛:

Այն ատեն մարդը ըսաւ.

—Տէ՛ր, ձայնդ կը լսեմ, բայց
դէմքդ չեմ տեսներ, անոնք չեմ
գիտեր:

—Ես Պետրոս Առաքեալն եմ,
պատասխանեց ձայնը:

—Ո՛վ Պետրոս Առաքեալ, գթա՛
ինծի. յիշէ՛ մարդկային տկարութիւ-
նը և Աստուծոյ ողորմութիւնը: Յի-
սուսի աշակերտը չէի՞ր: Իր բերնէն
չիմացա՞ր իր վարդապետութիւնը, և
չտեսա՞ր իր կեանքին օրինակը: Յիշէ՛
նաեւ թէ երբ անձկութեան մէջ էր
ու կը տառապէր Ան, երեք անգամ
խնդրեց քեզմէ որ չքնանաս, այլ
աղօթես. բայց դուն քնացար, որով-
հետեւ կոպերդ ծանրացեր էին: Ե-
րեք անգամ դքեզ քնացած դտաւ
Յիսուս: Ես ալ ճիշդ քեզի պէս ըրի:
Յիշէ՛ դարձեալ թէ դուն իրեն խոս-

տացար չլքանել զինքը մինչեւ իր մահը, բայց երեք անգամ լքեցիր, ուրացար զինքը, երբ Կայիափայի առջեւ տարին: Ես ալ այնպէս ըրի... Յիշէ՛ վերջապէս թէ երբ հաւը խօսեցաւ, գաւիթէն դուրս ելար և դառնապէս լացիր: Ես ալ այնպէս ըրի: Չես կրնար փակել ինձ երկնքի արքայութեան մուտքը:

Արքայութեան դրան ներքնակողմէն ձայնը չպատասխանեց այլևս: Մեղաւորը մէկ քանի վայրկեան լուռ մնաց. յետոյ վերսկսաւ դուռը բաղխել, և ներս մտնելու թոյլտուութիւն խնդրել:

Ուրիշ ձայն մը, այս անգամ թագաւոր Մարգարէին՝ Դաւիթի ձայնը, գոչեց.

—Գնա՛, քեզ նման մեղաւորներ չեն կրնար մեր քով ապրիլ արքայութեան մէջ:

Բայց մեղաւորը չհամոզուեցաւ: Արքայութեան դուռնէն չհեռացաւ, և վերսկսաւ իր խնդրանքը.

—Դժա՛ ինձ, ո՛վ Դաւիթ Արքայ, և յիշէ՛ մարդկային տկարութիւնն և Աստուծոյ ողորմութիւնը: Տէրը սիրեց քեզ և մեծ բրաւ մարդոց մէջ: Դուն ունէիր այն ամէն բաներն որոնց մարդ կը բաղձար. զօրութիւն, փառք, հարստութիւն: Կիներ ու զաւակներ ունէիր: Բայց տանիքի մը բարձունքէն տեսար քու խոնարհ հպատակներէդ մէկուն կինը, ու մեղքը մտաւ քու մէջդ: Ուրիշայէն յափշտակեցիր իր կինը, իսկ զինքն սպաննել տուիր Ամմոնացիի մը սուրովը: Դուն որ հարուստ էիր, աղքատին ձեռքէն յափշտակեցիր իր միակ գառնուկը, և զինքն ալ կորուստի մատնեցիր: Ես ալ

այնպէս ըրի: Յիշէ՛ թէ ի վերջոյ զղջացիր և ըսիր. «Իմ անօրէնութիւնս կը ճանչնամ, և կը զղջամ մեղքերուս համար»: Ես ալ ճիշդ այնպէս ըրի: Չես կրնար արգիլել ինձ երկնքի արքայութեան մուտքը:

Դուռին ետեւէն Դաւիթ արքային ձայնը լուռ մնաց.

Բայց մեղաւորը չվհատեցաւ: Վերսկսաւ դուռը բաղխել, և պահանջել երջանիկներու մէջ մուտքը:

—Գնա՛, մեղաւորները չեն կրնար մտնել երկնաւոր արքայութիւնը:

Բայց մեղաւորը, ճանչնալով Յովհաննէս աստուածաբան Աւետարանչին ձայնը, յոյսը ծնաւ սրտին մէջ, և ուրախութենէն թրթռուն ձայնով մը գոչեց.

—Հիմա՛ պիտի կրնամ մտնել. Պետրոս և Դաւիթ չպիտի արգիլեն զիս ներս մտնելէ, որովհետեւ կը ճանչնան մարդկային տկարութիւնն և Աստուծոյ անհուն գթութիւնը: Դուն ալ պիտի թողուս որ մանեմ, որովհետեւ չա՛տ սէր ունիս: Դուն չէի՞ր, ո՛վ աստուածաբան Աւետարանիչ, որ քու գրքիդ մէջ գրեցիր թէ Աստուած սէր է, և թէ ուլ որ չի սիրեր, չի ճանչնար զԱստուած: Դուն չէի՞ր որ ծերութեան օրերուդ մօրդոց միակ պատուէր մը տուիր. «Եղբայրներ, սիրեցէք մէկզմէկ»: Հիմա պիտի կրնանա՞ս ատել զիս և վռնտել: Կա՛մ ուրացիր քու խօսքերդ, և կամ թոյլ տուր ինձ Արքայութիւն մտնել:

Արքայութեան դուռները լայնօրէն բացուեցան: Յովհաննէս ողջագուրեց դարձի եկող մեղաւորը, և թողուց որ մտնէ երկնքի թագաւորութեան մէջ:

ԼԷՈՆ ԹՈՒՍԹՈՅ

* *

ԱՊԱԳԱՅ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

—Քաղաքակրթութիւնը, մեր քաղաքակրթութիւնը մեծ բարիք մ'է, կ'ըսեն մարդիկ:

Բայց այս համոզումն ունեցողները կը պատկանին այն փոքրամասնութեան որ կ'ապրին ոչ միայն այդ քաղաքակրթութեան մէջ, այլ անոյ, որ հանդատաւէտ, գրեթէ ծոյլ կեանք մ'ունի՝ քաղաքամամբ գործաւորներու աշխատանքին, և այսպէս՝ կ'ապրի միմիայն այդ քաղաքակրթութեան գոյութեան շնորհիւ:

Բոլոր այս մարդիկը, թագաւոր, կայսր, նախագահ, իշխան, նախարար, պաշտօնատար, զինուորական, կալուածատէր, վաճառական, ճարտարագէտ, բժիշկ, գիտնական, նկարիչ, ուսուցիչ, քահանայ, գրագէտ, ա՛յնքան վատահ են այս քաղաքակրթութեան մեծ բարիք մ'ըլլալուն, որ չեն կրնար ընդունիլ անոր անհետանալուն և նոյն իսկ փոխութիւն կրելուն գաղափարը:

Բայց, երկրագործ ժողովուրդներու ստուար զանգուածին, Սլաւ, Չինացի, Հնդկի, Ռուս ժողովուրդներուն, այսինքն մարդկութեան ինը տասներորդ մասին հարցուցէք թէ բարիք մ'է թէ ոչ՝ այժմու քաղաքակրթութիւնը, որ ամենամեծ բարիք մը կը թուի երկրագործութենէ գուրս ապրող մարդոց: Տարօրինակ բան. մարդկութեան ինը տասներորդ մասը բոլորովին ասորբեր պատասխան մը պիտի տայ: Ասոնք գիտեն թէ հողի պէտք ունին, աղբի, ոռոգումի, արելի, անձրեւի, անտառներու, հունձքերու, և մէկ քանի շատ պարզ երկրագործական գործիքներու, զորս կարելի է չինել՝ առանց հեռանալու երկրագործական կեանքէն. իսկ քաղաքակրթութիւնը, կամ ոչինչ գիտեն անոր վրայ, և կամ իրենց կը ներկայանայ մայրաքաղաքներու զեղխութեանց երեւոյթով՝ իր բանտերովն ու թիարաններովը հանդերձ, կամ տուրքերու և անօգուտ արձաններու, միւսէոններու, պալատներու ձեւով, կամ մաքատուններու անունին տակ որ կ'արգիլեն երկրի արտադրութեանց ազատ շրջաբերութիւնը, և կամ՝ վերջապէս՝ թնդա-

նօթներու, զբահաւորներու և քանակներու երեւոյթով, որ ամբողջ երկիրներ աւերակ կը դարձնեն: Եւ այն տառն կ'ըսեն որ եթէ այս է քաղաքակրթութիւնը, ատիկա պէտք չէ իրենց, և մնասակար է նոյն իսկ:

Քաղաքակրթութեան ընծայած տուեալութիւնները վայելող մարդիկ կը պնդեն թէ անիկա բարիք մ'է ամբողջ մարդկութեան համար: Բայց այս պարագային իրենք վկայութեան չեն կրնար կոչուիլ, քանի որ դատաւոր և դատաւարող են միեւնոյն ատեն:

Կարելի չէ ուրանալ թէ մենք այժմ հեռու չենք արհեստական յառաջդիմութեան շաւղէն: Բայց մ'զ հեռու է այդ շաւղէն: Ա՛յն պզտիկ փոքրամասնութիւնը որ գործաւոր ժողովուրդին կոնակէն կ'ապրի: Եւ գործաւոր դասակարգը, ա՛յն որ ամբողջ Բրիտանիայ աշխարհին մէջ քաղաքակրթութեան բարիքները վայելող մարդոց կը ծառայէ, անիկա կը շարունակէ ապրիլ ճիշդ այնպէս, ինչպէս կ'ապրէր հինդ-վեց դար առաջ, երբեմն երբեմն քաղաքակրթութեան փշրանքներէն օգտուելով միայն:

Եթէ նոյն իսկ աւելի՛ լաւ կ'ապրի, այժմ իր կացութիւնը հարուստ դասակարգին պատկանողներէն բաժնող հեռուորութիւնը աւելի մեծ է քան հինգ վեց դար առաջ: Չեմ ըսեր, կարգ մը մարդոց պէս, թէ քաղաքակրթութիւնը բացարձակ բարիք մը չըլլալով, պէտք է մէկ հարուածով ոտնակոխ ընենք ինչ որ մարդիկ պատրաստած են ընութեան դէմ պայքարելու համար: Բայց կ'ըսեմ. հաստատուելու համար թէ մարդոց յառաջ բերած արդիւնքները իրապէս անոնց օգուտին կը ծառայեն, անհրաժեշտ է որ բոլորն ալ վայելին զայն և ոչ թէ աննշան փոքրամասնութիւնը. պէտք չէ որ ոմանք բռնի ուժով զրկուին իրենց ունեցածէն՝ յօգուտ ուրիշներուն, այն պատճառանքով որ այդ ստացուածքնին որ մը իրենց յաջորդներուն պիտի անցնին:

Ազնիւ ու բանաւոր կեանքն անոր մէջ կը կայանայ, որ մարդ շատ մը գործերու կամ բազմաթիւ ճամբաներու մէջէն ամէնէն բանաւոր գործերը, լաւագոյն ճամբաներն ընտրէ: Արդ, Բրիտանիայ մարդ-

կուլթիւնը, իր ներկայ կացութեան մէջ, սա երկու բաներէն մէկը պէտք է ընտրէ. — Կա՛մ շարունակել այս գէշ ճամբան ուր այժմու քաղաքակրթութիւնը ամէնէն մեծ բարիքները կ'ընծայէ ամէնէն քիչ ուրիշներուն՝ միւսները պահելով չքաւորութեան և գերութեան մէջ, և կոմ անմիջապէս՝ առանց առաւել կամ նուազ հեռաւոր ապագայի մը յետաձգելու՝ մասամբ կամ ամբողջովին հրաժարիլ այդ քաղաքակրթութեան մէկ քանի առանձնաշնորհալիներու ընծայած առաւելութիւններէն, որոնք կ'արգիլեն մարդոց մեծամասնութեան ազատագրումը՝ չքաւորութեան և գերութեան ճիրաններէն:

ԼԷՈՆ ԹՈՒՍՏՈՅ

ԱՍՏՈՒԱՍ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Ճշմարտութիւնը աւելի դիւրաւ ի լոյս կուգայ սխալներու միջոցաւ քան թէ չփութութեանց, կ'ըսէ սկոլաստիք առած մը: Ասոր կը միանայ Կէօթէի դիտողութիւնը՝ թէ Աստուածները երբէք տխմարութեամբ չեն գործեր: Գերբնականէն ճառող ժողովրդական գրութեաներ կարդացած ատեն, մարդ յաճախ կը յիշէ այս երկու իրողութիւնները: Այս տեսակ գրութեանց գլխաւոր հանգամանքն է իրենց չփութութիւնը, նմանօրինակ կացութենէ մը՝ միայն ոչնչաբանութիւն և բաքելոնական խառնակութիւն առաջ կուգայ: Մեր առաջին պարտականութիւնն է զտել մեր խորհուրդները և գաղափարները, լաւ մը գիտնալու համար ինչ որ ըսել կը փափաքինք և ինչ բանի որ կը բաղձանք:

Նախ և առաջ պէտք է հասկնալ Բնութիւնը մառին իմաստը: Սովորաբար այս ոճին ներքեւ բաւական ստորին հոգեբանութիւններ ծածկուած կը մնան. և արդարեւ մեր ցաւերուն մեծամասնութեանը աղբիւրն են: Ինչ է ուրեմն Բնութիւնը:

Ժողովրդական մտածումները հիմնուած են զգայական իրապաշտութեան մը վրայ: Նիւթական իրերու դրութիւնը մը կայ, կ'ը-

սեն, որ մեզ չըջապատող անջրպետին մէջ մեծ փոփոխութիւններ կ'արտադրէ: Անմիջական գործիչը նիւթն է, որ իրմէ անբաժան ուժերուն և օրէնքներուն միջոցաւ կը սկսի և կը շարունակէ գործողութիւնները, արտադրելով բազմաթիւ արդիւնքներ: Իրերու և օրէնքներու այս դրութիւնը Բնութիւնը կ'անուանենք, ու այս դրութեան և անոր օրէնքներուն համեմատ պատահած ամէն դիպուած՝ բնական: Իրերը և իրենց ուժերը հոն են բացորոշ կերպով, և ուրիշ ոչինչ կ'երեւայ: Ասոնցմէ զատ ինչ որ կայ՝ կասկածելի է, կարելի չէ ոչ մէկ պարագայի մէջ Բնութեան իրականութեան և գործունէութեան վրայ երկբայիլ: Կը պատճառաբանեն թէ Աստուած և հոգի ենթադրութիւններ են, իսկ Նիւթը հաստատուն և տեսանելի իրողութիւն մըն է:

Այս դատողութիւնները միշտ զօրաւոր հակում մը ունեցած են դէպի անաստուածութիւն. գոնէ ներկային մէջ Բնութիւնը վերածուած է ինքնավար դրութեան մը: Ինչպէս որ Սկիզբը կ'աներեւութանայ անցեալին, և հորիզոնները կը կորսուին ուն հուն անջրպետին մէջ, ենթադրութիւնը հեռու չէ թէ կարելի է Բնութիւնը միշտ գոյութիւն ունեցած է՝ մի օրինակ և յանձնապատան: Այսպէս, Բնութիւնը վերոյիշեալ ծրագրին մէջ միշտ ինք իր վրայ կ'անդրադառնայ. Աստուծոյ և Բնութեան դերերուն մէջ աշխատանքի լաճանում մը տեղի ունեցած կ'ըլլայ: Ինչ որ կարելի է Բնութեան վերագրել, ըստ բաւականին բացատրուած կը կարծուի, առանց աւելի ապահով հաստատութեանց: Եթէ Բնութեան հետ կապ ունեցող Միտք մը կայ, այն պարագային միայն պէտք է բացատրել այն որոշ իրողութիւնները, որոնք դեռ նկատողութեան առնուած չեն իբր ընական ծրագրի մը արդիւնքը: Այսպէս, Աստուած միայն առժամանակեայ ենթադրութիւն մըն է, և իր էականութիւնը կը նուազի՝ որքան որ ընական օրէնքներու տիրապետութիւնը ընդարձակուի: Անաստուածութիւնը այս խորհելակերպին սահմանը կը կազմէ: Գծնը ըսած է թէ՝ ի վերջոյ, գիտութիւնը զԱստուած սահմանազրկելու պիտի առաջնորդէ,

և խոնարհելով շնորհակալութիւն յայտնելէ վերջ իր առժամանակեայ ծառայութիւնն հերոսն համար, դուրս պիտի ճամբէ: Երբ օրէնքը ամէն բան ընդգրկէ, Աստուած անկարեւոր ենթադրութիւն մը եղած պիտի ըլլայ: Այս գաղափարին որքան ընդհանրացած ըլլալը սովորական դարձած է ամէն անոնց, որոնք ծանօթ են վերջին սերունդին բնապաշտական գրականութեան:

* * Ներկայ վիճաբանութիւնը անաստուածին դէմ չէ, այլ աստուածապաշտին հետ որ յաճախ անբարեկամ իման ըմբռնած է Բնութիւնը: Կամ բացէ ի բաց և կամ գաղտնի կերպով կը վախնայ Բնութենէն, և բնապաշտութիւնը իրեն հակակրական և յանդիմանական ոճ մը կը թուի, ու ինքզինք ընկճուած կը զգայ երբ ցարգ յայտնի անկանոնութիւն մը օրէնքի բերուի: Փոքր ինչ անձկութեամբ կը վնասէ խրատներ, կը պնդէ մասնաւորապէս այն բաներուն վրայ որոնց բացատրութիւնը դեռ չի գտնուիր գիտութեան մէջ, և զգուշութեամբ կը մթերէ հրաշքի պատմութիւններ, իբր թէ առանց ատոնց կրօնքը պիտի անհետանար, մինչդեռ անոնցմով է որ կը յուսանք հակառակորդներու բանականութիւնը դիմադրել:

Ընդունինք որ պատմութեան մէջ շատ ու շատ առիթներ եղած են՝ եթէ ոչ արդարացնելու՝ գոնէ ներդաշնան գտնուելու այս կացութեան: Յաճախ բնապաշտութիւնը անաստուածութեան վարդապետութիւն մը եղած է: Բնութիւնը և Միտքը կանգնած են փոխադարձութեան, և հաւատացեալը ոչ մէկ դարման գտած է իր հաւատքը պաշտպանելու, եթէ ոչ անուանարկելով Բնապաշտութիւնը և բնական օրէնքը, գիտութիւնը, և պնդելով հրաշքներու, օրինաւորութիւններու վրայ: Կարելի է Նիւթը կրնայ բացատրել Արեգակնային դրութիւնը և կամ նոյն իսկ անգործարանաւոր աճումները և արտադրութիւնները, բայց չի կրնար կեանքը բացատրել, լուելեայն իմացուելով որ եթէ ինքնաբեր ծննդագործութիւնը հաստատուի աստուածապաշտութեան տապալումը պիտի ըլլայ: Բայց ոչ անաստուածը և ոչ աստուածա-

պաշտը կը մտածէին թէ կարելի է: Նիւթը ոչ մէկ բան կրնայ բացատրել և իբր էաբանական իրողութիւն մը գոյութիւն անգամ չունի: Ի նպաստ իրապաշտին, որուն ասիկայ սխալ կը թուի, երկու խօսք պէտք է աւելցնել տեսանելի աշխարհին բնութեւութականութեան և աննիւթականութեան նկատմամբ:

Սկսինք, ընդունելով ամենէն իրապաշտ վարդապետութիւնը: Այս սեղանը որուն վրայ կը գրեմ, անշուշտ իրական է, այսինքն երազ մը չէ և ոչ ալ պատրանք մը: Բայց երբ սկսինք անոր իրականութեան ընդմիջելու վրայ խորհիլ, անմիջապէս շփոթութիւններ կ'երեւին: Այսպէս, բնագէտը մեզ կը ճառէ մասնիկներու մասին, որոնցմէ այս սեղանը կը բաղկանայ և եթէ ալ աւելի հարցափորձենք, կ'իմանանք յորձանաւոր շրջանակներու զօրութեան կեդրոններու և կարգ մը ուրիշ գաղտնիքներու վրայօք: Երբ այս բաներուն վրայ լաւ մը խորհինք, պիտի տեսնենք որ մեր շուրջը գտնուած իրերը երեւոյթներ են, և ճշմարիտ պատճառականութիւնը անոնց ետին է:

Այսպէս, բնագիտութիւնն իսկ մեզ կ'առաջնորդէ հեռու սովորական դատողութեան գաղափարէն, որուն մէջ տիեզերքը կը բացատրուի իբր նիւթ՝ իր մէջ պարուենակելով գործօն ուժեր, և մեզ կը բերէ անոր ետին գտնուած գերագոյն պատճառականութեան, որմէ կախում ունի ամէն բան և ուրկէ ամէն ինչ կը բղխի: Այս տեսակէտէն դատելով՝ Աստուածապաշտ պէտք չունի վրդովուելու եթէ ինքնաբեր ծննդագործութիւնը հաստատուի: Որովհետեւ սոյդ պիտի ապացուցանէ թէ գերագոյն Պատճառը գործելու մէկէ աւելի կերպեր ունի: Աստուածապաշտութիւնը ոչ թէ կանոնի այլ պատճառականութեան հետ յարաբերութիւն ունի: Այս բնազանցական թելադրութենէն զատ, հաւատացեալին բնապաշտութեան հանդէպ զգացած սոսկումը տրամաբանօրէն անկարելի է: Հիմնուած է լուելեայն իմացուած երեւակայութեան մը վրայ, թէ բնութիւնը միեւնական պրութիւն մըն է, որ իր հաշուոյն շատ մը աննպատակ բաներ կ'ընէ: Ասոնք ու է ծրար-

գիր մը չեն ներկայացներ, այլ կոյր դիպ-
ուածներ որոնց մասին բնութիւնը միայն
պատասխանատու է: Ինչ որ բնական օրէնք-
ներու համեմատ կը կատարուի, նպատակ
մը չ'արտայայտեր այլ պարզապէս բնական
է: Միթէ նպատակ մը գոյութիւն ունենա-
լու համար «միջամտութեան», «ձեռնտու-
ութեան» «մասնաւոր նախախնամութեան»
և այդ տեսակ բաներու պէտք կայ: Ուր
որ օրէնքի հետք մը կայ, արգիլուած է
խորհիլ ու է նպատակաւոր մեկնութեան
վրայ, ըլլայ անհատական կեանքին, ըլլայ
պատմական լայն ասպարէզին մէջ: Փոքր
ինչ զննութեան վերջ ասոր ծանծաղա-
մտութիւնը չափազանց յայտնի է: Եթէ բնու-
թեան սկիզբը հոգեզէն իմացականութեան
մը կախում ունի՝ իր ամէն կոնցրետութիւն-
ներն ալ հաւատարմապէս կը հպատակին նոյն
իմացականութեան: Մեքենականութիւն մը
երբեք նոր բաժանումներ չի կրնար ստեղ-
ծել, և կամ թէ նախապէս իր մէջ չի պա-
րունակած հնարքներ ընել: Արդ՝ եթէ են-
թադրենք որ Աստուած ստեղծեց բնական
դրութիւն մը որ սահմանուած էր յարակից
օրէնքներու համեմատ զարգանալ, պէտք է
ընդունինք որ ստեղծագործութիւնը իր մէջ
կը պարունակէր ամենափոքր մանրամաս-
նութիւններով հանդերձ ամէն ինչ որ պիտի
պատահէր դրութեանը ընդլայնման միջո-
շին: Ոչ մէկ ուղի կայ որմէ նախնական
կարգադրութեանէն դուրս գիպուածներ
սպրդին: Եւ եթէ ենթադրենք որ Ստեղ-
ծողը ըրածին գիտակից էր, պէտք է նաև
ենթադրենք թէ այդ հետեւութիւնները ինքն
էր նախատեսած:

Աստուածապաշտութիւնը ասկէ անդին
ոչինչ կը հաստատէ: Եթէ ու է անցք մը
երկնային նպատակ մը կը ներկայացնէ, կամ
եթէ Աստուածային ծրագրի մը մասը կը
կազմէ, նոյնքան էապէս նպատակաւոր կը
կը մնայ եթէ բնական գործողութեանց մի-
ջոցաւ արտադրուի որքան պիտի ըլլար եթէ
հրամանով գոյացած ըլլար, բայց նպատակին
իրականութիւնը զանց առած կ'ըլլանք: Երբ
խորհինք թէ դրութիւնը կրնայ այնպէս
գործել ինչպէս չէր նախապատրաստուած
ստեղծագործութեան ատեն, և հետեւաբար

իր գործունէութիւնը կը բաղկանայ միջե-
նական դէպքերէ՝ զուրկ ուրիշ ու է նը-
շանակութեան: Եւ երբ նպատակը կ'ըն-
դունինք, զայն գրեթէ բոլորովին կը ջնջենք՝
աչք գոցելով մեր աշխարհիկ վճիռներուն
համեմատականութեան (relativity) և զայն
դնելով այնքան հեռաւոր ժամանակի մէջ
որ այլևս կը սկսինք խորհիլ թէ աստուա-
ծային խորհուրդէ և հոգածութեան դուրս
անցած ըլլալու ենք: Մեզ համար դիւրին
և կարելի է մոռնալ տարիներ առաջ կազ-
մուած ծրագիրներ և կամ նուազ կարեւո-
րութիւն ընծայել անոնց, ու կը հետեւեցնենք
որ Աստուած ալ այդպէս ըլլալու է: Գա-
ղափար չունինք դարերէ ի վեր նախա-
տեսուած կարօտութիւններ հոգացող հաւա-
տարիւ նպատակի մը վրայ:

Այս վերջին ծայր անհեթեթ է: Երկայն
և կարճ՝ համեմատական բառեր են և Յաւի-
տնականին համար նշանակութիւն չունին:
Բնազանցութիւնն ալ հոս կ'աւելցնէ իր
ազդեցութիւնը՝ ջնջելով տիեզերքին ան-
սահման դարերէն քաղուած սարսափները,
թելադրելով «ժամանակ» ինքնագիտակ-
ցութեան կապակցութիւն մը ըլլալը ու
մեզի համար ունեցած նշանակութիւնը՝ Յա-
ւիտնականին համար ալ չունենալը:

Այս պարագային, ժամանակը մեր հու-
նաւորութեան ստուերն է միայն և ոչ թէ
կեանքի օրէնքը: Ուրեմն հարկ չի կայ որ
նպատակի հաւատքը լքանենք, օրէնքին և
կամ իրերու դարաւորութիւնը պատճառ
բռնելով: Ստուգիւ, յաճախ անկարող ենք
գիպուածներու մէջ մասնաւոր նշանակու-
թիւն մը գտնելու, բայց այդ միայն կը
նշանակէ թէ հիմնական նպատակը միշտ բա-
ցայայտ չէ: Դիպուածի մը օրինաւորու-
թիւնը նպատակի հարցին հետ ու է առն-
չութիւն չունի, և այս է աստուածապաշ-
տին համար կարեւոր եղածը:

Ուրեմն Աստուածակրօնը գէշ դատո-
ղութիւն կը գործածէ, երբ օրէնքի կարգա-
դրութիւնը պատճառ կը բռնէ նպատակը
ուրանալուն: Դիպուածներուն պատահման
եղանակը և ոյգ անցքերուն նպատակաւոր
ծրագրի մը մէջ ունեցած նշանակութիւնը
յաւէրօ անջատ են իրարմէ: Արդ, կրնանք

հաստատել գիպուածներու օրինաւորութիւնը, և միեւնոյն ատեն առհասարակ ամէն ինչ նպատակաւոր մեկնութեան մը մէջ բովանդակել: Մարդուն Բնութեան վրայ ունեցած իշխանութիւնը կ'իրադրծուի, օրինաւոր կանոններու համաձայն, մեքենական միջոցներով: Եթէ լուսնաքնակ գիտուն մը մեր մոլորակը այցելէր, պիտի կրնար մարդկային նպատակին տիրել միեւնոյն դատողութեամբ, որով մենք աստուածային նպատակին տիրել կը կարծենք: Օրէնքի նոյն իրողութիւնները երկուքին ալ կը յարմարին, և երկուքին ալ կը պատշաճին հաւասարապէս: Նպատակի և օրէնքի այս թիւը հակադրութիւնը փոքրագրական իմացականութեան ամենամեծ անօթութեան թիւններէն մին է, և հիմնուած անպաշտպանելի փիլիսոփայութեան մը վրայ:

Փիլիսոփայական քննադատութիւնը ցոյց տուած է թէ բնութիւնը այս իմաստով լոկ վարդապետական կուռք մըն է նիւթական կամ էականական Բնութիւն չկայ, այլ օրինաւոր անցքեր, որոնք տեղի կ'ունենան օրէնքի կարգադրութեան համեմատ և կը կցուին ուրիշ օրինաւոր անցքերու: Բայց այս կարգադրութիւնը իր մէջ պատճառականութիւն չունի, և պատճառական իմաստով ոչինչ կը բացատրէ. որովհետեւ ինքն իսկ լոկ կանոն մը ըլլալով՝ իրմէ բարձր գորութենէ մը կը բխի: Բնական օրէնքի նկատմամբ երկու անջատ հարցեր կը ներկայանան: Ասոնք են. — Ա. Գոյակցութիւն և յաջորդութիւն որոնք զայն կը կազմակերպեն, Բ. Կարգադրութիւն, հիմնական պատճառականութիւնը և նպատակը: Իրերը կ'ապրին (գոյութիւն ունին) և եղբւրցութիւնները տեղի կ'ունենան մասնաւոր կերպերով: Գիտութեան պաշտօնն է գըտնել, նկարագրել և արձանագրել գոյութեան ու եղբրցութեան եղանակները: Նոյն իսկ երբ այս հաստատ է, դարձեալ պէտք ունինք գաղափար կազմելու գործող պատճառականութեան ու ամբողջութեան հիմը կազմող նպատակին մասին: Այս է փիլիսոփայութեան ասպարէզը:

Նոր խորհուրդին համաձայն գերբնականը օտար չէ բնութեան, և ինքզինք յայտնելու

համար ըստ գիպաց ասպատակութիւններ չընենք այլ որ աստիճան որ Բնութիւնը իր ամբողջութեանը մէջ նկատուի՝ Գերբնականը բնութեան մշտական հիմը և վարիչն է: Բնութիւնը պարզապէս կերպարանք մըն է որուն ներքեւ գերագոյն Բանականութիւնը և Կամքը կը յայտնուին: Այս է այն աստուածային վարդապետութիւնը որուն կը կը յանդի փիլիսոփայութիւնը՝ տիեզերական ճշմարտութեան համար ըրած հետազօտութեանց միջոցաւ:

Կը յանգին յաւիտեան գործող կենդանի Կամքի մը և ոչ թէ անկենդան աշխարհի մը: Եւ Բնութիւնը աստուածային պատճառականութեան միակ հաստատ երեւոյթն ըլլալով՝ պէտք է ընդունիլ որ եղբրցութիւնները թէ՛ բնական են և թէ գերբնական, յանգելով կենդանի Կամքին, որուն մէջ կը կայանայ ամէն բան և որմէ ամէն ինչ կը բղխի:

Ամենէն սովորական դիպուած մը, զոր օրինակ տեսելի մը անկումը, հրաշքի չափ գերբնական է իր պատճառականութեան մէջ, որովհետեւ երկուքին մէջ ալ Աստուծոյ կառավարութիւնը հուսաարարապէս կը դառնուի:

ՊՐԵՏԵՆ ՌԱՐԲԵՐ ՊԱՌԻՆ

Թարգմ. Անգլ. ԱՐՏԵՄԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ա.ԶԳ. ԺՈՂՈՎՆ անցեալ ուրաթ գոնէ մասամբ լուծեց ազգ. վարչական տագնապն որ կը շարունակուի երեք չորս ի վեր: Ազատականներու և կեդրոնի խրմբակցութեան միջև համաձայնութիւնն որ կ'ըսուէր թէ գոյացած է: Վերջին պահուն անհամաձայնութեան փոխուեցաւ նորէն, կուսակցական երեսփոխաններու այն պահանջումին վրայ թէ եկեղեցիները բանախօսութեանց առջև բաց պահելու խնդիրն ալ պէտք է այս առթիւ կարգադրուի միանգամ ընդ միշտ: Հետեւապէս երեսփոխանական որոշ կուսակցութիւնք իրենց հակընդդէմ ծրագրին վրայ հաստատ մնա-

ցին, և մեծամասնութիւնը համամիտ գրտնութեամբ Ազգ. Վարչութեան տեսութեանց՝ իր հրաժարագրին մէջ յիշուած շատ մը արարքներու մասին որ չեն կրնար սահմանադրական սկզբունքներուն համաձայն նկատուիլ ոչ մէկ երկրի մէջ, և մերժեց Քաղաք. Ժողովին հրաժարականը, ընդունելով միայն կրօնականինը, որուն պաշտօնավարութեան երկամայ չըջանը լրացած էր: Քաղաքական Ժողովոյ անդամք հաստատ կը մնան սակայն իրենց հրաժարականին վրայ, և կը հաւաստուի թէ այս շարժումն Ազգ. Ժողովոյ նիստին պիտի մատուցանեն իրենց հրաժարականներն առանց պատճառաբանութեամբ և անհատաբար, ու եւ խնդիր չարուցուելու համար անոր շուրջը: Հետեւապէս Ազգ. Ժողովին մերժումը Քաղ. Ժողովոյ հրաժարականին, բարոյական նշանակութիւն մը ունի միայն պաշտօնական հաւանութիւն մը ըլլալով Վարչութեան հետեւած ուղղութեան, և Պատրիարքական հրաժարականին հետ, որում մասին վիճաբանութիւնք շարունակելի են, Քաղ. Ժողովին հրաժարականն ալ կը մնայ լուծելի խնդրոց կարգը: Աւելցնենք թէ Ազգ. Ժողովին անցեալ շարժումն նիստին մէջ կարգացուեցաւ Ս. Պատրիարք Հօր մէկ նամակը, 49 երեսփոխաններու մէկ զրին առթիւ՝ որով բարեկարգութեան պահպանման համար օրինական միջոցներու գիտելու պէտքը կը չեղտուէր: Այդ նամակին մէջ Ն. Սրբազնութիւնը վերջատին կը յայտարարէր թէ ինք իրրեւ հայր Ժողովրդեան և իբրեւ եկեղեցական, իր դերին, զիրքին և կոչումին անհամապատասխան կը գտնէ իր բարոյական ուժին տկարացումը խոստովանել թէ և կրթիլ զինուորական ուժին, իսկ եթէ կայ անպատճառ այսպիսի պէտք մը, ատիկա կը պատկանի Ժողովին քուէով ընտրուած ատենապետին: Կրնայ ան գործադրել, ինք համերաշխութեան կողմը գտնուած է միշտ:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ. — Կրօն. Ժողովին հրաժարականն ընդունուած ըլլալով Ազգ. Ժողովին, ըստ օրինի Համադրումար Ժողովը գումարուեցաւ առջի օրը (Եշ.) նախագահութեամբ Գեր. Տ. Գաբրիէլ Ս.

Եպիսկ. Ճէվահիրճեանի: Նոյն Ժողովին համար ընտրեւեաց եռապատիկ ցանկ պատրաստելու, և մատուցուելու համար Ազգ. Ժողովին: Հրաւէր ուղղուած էր 56 եկեղեցականներու, (Քարողիչ, Աւագերէց և աթոռակալ քահանաներ) որոնցմէ 34ը միայն պատասխանած էին՝ անձամբ կամ նամակով: Համադրումարը, Սահմանադրութեան տառին կառչած, ընտրելիներու շարքէն դուրս թողուց մէկ քանի ձեռնհաս եկեղեցականներ՝ վարդապետ թէ քահանայ՝ այն նկատումով որ անոնց ձեռնադրութենէն ի վեր հինգ տարին լրացած չէ տակաւին: Եռապատիկ ցանկի պատրաստութեան համար կատարուած քուէարկութիւնը հետեւեալ արդիւնքը տուաւ. —

Գուէ

1 Տ. Գաբրիէլ Եպիսկ. Ճէվահիրճեան	31
2 Տ. Գրիգորիս Արք. Յովհաննէսեան	26
3 Տ. Վահրամ » Մանկունի	22
4 Տ. Գէորգ » Երէցեան	13
5 Տ. Մաղաքիա » Օրմանեան	5
6 Տ. Վահան Ծ. Վ. Յակոբեան	24
7 Տ. Ղեւոնդ » » Դուրեան	23
8 Տ. Խոսրով » » Պէտրիկեան	20
9 Տ. Տիրայր » » Մարգարեան	19
10 Տ. Եղնիկ » » Պապեան	19
11 Տ. Գրիգորիս » » Պալաքեան	18
12 Տ. Սմբատ » » Գաղաղեան	18
13 Տ. Միքայէլ Քնյ. Աշճեան	30
14 Տ. Հմայեակ » Էքսէրճեան	29
15 Տ. Վարդան » Դերձակեան	26
16 Տ. Գրիգոր » Երէցեան	20
17 Տ. Սարգիս » Զօհրապեան	18
18 Տ. Գէորգ » Անանեան	17
19 Տ. Եղիազար » Պօղոսեան	15
20 Տ. Պետրոս » Յակոբեան	14
21 Տ. Յակոբոս » Տէլէճէկեան	14
22 Տ. Պօղոս » Պէյաղճեան	13
23 Տ. Արքահամ » Էպէեան	13
24 Տ. Վաչտակ » Դալբաղճեան	13
25 Տ. Գէորգ » Պաղաղեան	12
26 Տ. Գրիգոր » Յակոբեան	12
27 Տ. » » Ծէպէճեան	12
28 Տ. Միքայէլ » Ոսկերիչեան	11
29 Տ. Անանիա » Յակոբեան	10
30 Տ. Գաբրիէլ » Յովակիմեան	10

31 Տ. Վահրամ	»	Յակոբեան	9
32 Տ. Ներսէս	»	Նադիրեան	9
33 Տ. Եղիա	»	Կարապետեան	8
34 Տ. Խորէն	»	Վարդանեան	8
35 Տ. Կարապետ	»	Ստեփանեան	7
36 Տ. Սահակ	»	Պետրոսեան	6
37 Տ. Կարապետ	»	Յակոբեան	6
38 Տ. Խաչատուր	»	Դերձակեան	6
39 Տ. Արիստակէս	»	Վարժապետեան	6
40 Տ. Սահակ	»	Բաբազեան	6
41 Տ. Մեսրոպ	»	Տ. Մեսրոպեան	6
42 Տ. Բարթամ	»	Թադէոսեան	5

ՊԱՆԱԺԵՆԻՈՅ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Կը պահանջէ ռուս կառավարութիւնը, կ'ըսէ գերման թերթի մը Բեդերսպուրկի թղթակիցը, փոփոխելու համար Կաթողիկոսական ընտրութեան եղանակը, որ Ռուսահայոց կղերին փոքրամասնութեան հետեւանօք, վտանգ մը կը նկատուի եղեր Մոսքովեան Պետութեան շահերուն: Յայտնի է թէ այս խնդիրը քանիցս յարուցուած է Ռուսիոյ կողմէ Պալատինիոյ հաստատութեանէն ի վեր: Բայց ընդհանուր Հայոց կաթողիկոսին ընտրութեան եղանակը չի կրնար փոխուիլ մի միայն կաթողիկոսին հետ բանակցութեամբ կամ Պալատինիայի փոփոխմամբ: Կարելի է միայն, Ռուսահայոց առաջնորդական թեմերու թիւն ալ շատցնել արդար հաւասարակշռութիւն մը հաստատելու համար ռուսահայ և թրքահայ ընտրողներու թիւին մէջ: Անշուշտ՝ իր երանաշնորհ նախորդներուն նման, Մայր Աթոռոյ այժմու վեհ. Գահակալն ևս այս իմաստով պիտի խօսի, երբ պաշտօնապէս իրեն դիմում ըլլայ:

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ Ընդհ. Ժողովի նիստին մէջ (գումարուած անցեալ Գշ. օր) Տնօրէն Ժողովոյ անդամ Յովհ. Յակոբեան էֆ. ի տուած բացատրութիւններէն գոնութեամբ կը տեղեկանանք թէ Ընկերութիւնը բարգաւաճ վիճակ ունի: Անցեալ տարի ենթադրեալ մուտքն իրականացնելէ զատ 823 ոսկի յաւելում կար: Տնօրէն խորհուրդը գործն ստանձնած ստեն մուտքն 167,000 ղշ. էր, իսկ այս տարի եղաւ 259,918 ղշ. պահեստի գումարն էր 1450 ոսկի, այժմ 2114 ոսկի: Վարժարան-

ներու թիւն ալ 46 էն բարձրացած է այժմ 70ի

ԲԱՂԷՇԻ առաջնորդարանէն կը հեռագրուի թէ նիւթական անձկութեան պատճառով ստիպուած են փակել վարժարանները:

ԵԻԴՈԿԻՈՅ առաջնորդ ընտրուած է Սերաստիոյ որբանոցին տեսուչ Տ. Շուարշ Վ. Սահակեան:

ԽԱՐԲԵՐԻ կուսակալին արարքներուն դէմ բողոքելու համար պատուիրակութիւն մը եկած է Կ. Պոլիս:

ՋԵՅԹՈՒՆԻ դատաւորն և իր մէկ արբանեակը պաշտօնանկ եղած են Հալէպի կուսակալին կողմէ, քաղաքն ապստամբութեան մէջ ցուցնող հեռագիր մը ուղղած ըլլալուն համար:

ԻԶՄԻՐԻ առաջնորդ Տ. Մատթէոս Մ. Վ. ի նախաձեռնութեամբ լսարան մը հաստատուած է քաղաքին մէջ, ուր կիրակի և ուրիշ օրեր շինիչ բանախօսութիւններ և երաժշտական հանդէսներ պիտի կատարուին:

Տ. ԿՈՄԻՏԱՍ Վ. Ի ՀԱՄԵՐԳԻՐ, մասնակցութեամբ 300 երկսեռ երգիչներու, որուն անհամբերութեամբ կը սպասուէր, վաղը տեղի կ'ունենայ Բերա, Բըղի Շանի ձմեռնային թատրոնին մէջ: Երգերը առնուած են մեր եկեղեցական երաժշտութեանէն և գաւառական եղանակներէ: Տոմսակները կը ծախուին Ղալաթիոյ Եկեղեցւոյ դպրաց դասուն սենեակի:

ԳԱԼՅԱՆԱՆ Որբանոցի 44րդ տարեգարձին առթիւ թէև այս կիրակի դպրոցական հանդէս մը տեղի պիտի ունենար որբանոցին մէջ, սակայն տիրող համաճարակին պատճառով խնամակալութիւնը որոշած է միայն պատարագով բաւականանալ:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅԵԱԿ ԲԷՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ԲԷՆՅ. ԿԷԶԻՒԻԲԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաւմաֆճըլար, Յակոբեան խան

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.


THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF
CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻԻ ԱԻԵՐԱԿ-
ՆԵՐՈՒՆ, գրեց Գրիգորիս Ծ. Վ. Պապա-
նան: Բազրատունեաց հռչակաւոր մայրա-
քաղաքը, որ դարաւոր և անհերքելի վկան
է Հայուն անցեալ փառաւոր քաղաքակր-
թութեան, տեղւոյն վրայ ուսումնասիրու-
թեամբ և նշանաւոր գիտնականներու գոր-
ծերուն հետեւողութեամբ նկարագրուած է
այս գործին մէջ՝ պատմական, տեղագրա-
կան, գիտական ևն. տեսակէտներով: Ըն-
տիր թուղթի վրայ, չքեղ տպագրութեամբ
հրատարակուած, և ձօնուած է Վեհ. Տ.
Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոսին, Որուն
և Անիի աւերակներու 34 պատկերներով
զարդարուած է: Դին 7 1/2 զրշ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ, գրեց Մա-
միկոն Վարժապետեան: Հեղինակը կը խօսի
այն բարեփոխումներուն վրայ որոնց կը
կարօտի, իր կարծեօք, Հայ Եկեղեցին:
Խնամով պատրաստուած գործ մը, թէև
իր յանդուգն կարծիքներէն ոմանց համա-
միտ չ'ըլլանք: Տպ. Մարզուան, Ներսո և
Սրապեան: Դին 2 զրշ.:

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսագիր ազգային, բանասիրական
գրական և գիտական, պատկերազարդ

Վենետիկեան Հայրերու հրատարակած
այս Հանգիսարանը ամէն ամիս կը բերէ
մեզի Հայ մատենագրութեան և Հայ այժ-
մէութեան նուիրուած հմուտ յօդուածներ
և տեսութիւններ: Տարեկան բաժնեգին 10
ֆր. կամ 50 զրշ.: Հասցէ.—Rédaction
de la Revue «Bazmavep», St. Lazar,
Venise (Italie).

Հրատարակուեցաւ Հոկտեմբերի թիւը:

ՀՄԱՅՆԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

% 30 զեղչ

Կեդրոնատեղի՝ Սիւմպլիւիւ խան Փափազ-
եան գրատուն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅՆԵՐԷՆ

Զ. Տ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

1136 Ութածալ էջ.—Websterի հրատա-
րակիչներէն առնուած 800 գեղեցիկ
պատկերներով

Եզական աշխատութիւն. գնահատուած
Հայ և օտար բազմաթիւ անձնաւորու-
թիւններէ: Անգլիերէն Հոմանիշներ բառե-
րու տակերը դրուած յար և նման Webs-
terի: Մասնաւոր Յաւելուած մը Անգլիա-
կան և Ամերիկեան բազմաթիւ ոճերու և
և ասացուածներու օրինակներով բացատ-
րուած: Մասնաւոր Յաւելուած մը Անգ-
լիական նոր ուղղագրութեան բարեհաճ
արտօնութեամբ, Simplified Spelling
Boardի:

Անկլօ-Հայ Փափազեան բառարանը՝
արդիւնք երկարամեայ ուսումնասիրու-
թեան և տաժանելի աշխատութեան, պատ-
րաստուած է մեծ իննամբով և զլիսաւոր
հետեւողութեամբ Websterի և Cassellի
վերջին բառագրոց և նիւթական ու բա-
րոյական ո և է զոհողութիւն չէ խնայուած՝
Ամենակատարեալը, Ամենապատահելին և
Ամբողջի ընելու համար:

Անկլօ-Հայ Փափազեան բառարանը կը
ծախուի մասնաւորապէս պատրաստուած
տուփերու մէջ ի գին անգլիական լաթա-
կազմը 70 իսկ կիսակաշին 75 դահեկանի,
փօսթի ծախքով 75 և 80 դահեկանի: Ամե-
րիկայի համար 3 տողար և 3.20ի, իսկ Եւ-
րոպայի համար 16 և 17 ֆրանքի: Փո-
խարժէքը զրկել չէքով կամ մանտարոս-
թով ուղղակի հեղինակին, առանց երրորդի
մը, յապաղմանց և այլ անպատեհութեանց
տեղի չտրուելու համար:

Հասցէ,

Z. D. S. PAPA ZIAN,

Bible House

Constantinople, (Turkey)

